

# ՄԱՅՐ ԴԻՒԱՆ ՄԽ. ՎԵՆԵՏԻԿՈՅ Ի Ս. ՂԱԶԱՐ

(Ըարութակութիւն տես Բազմավէպ 1925, էջ 189)

## ՃԻԱ.

Միջանկեալ դէպքերով նախ տարաբախտ Սուրբիաս կարծեցեալ եպիսկոպոսին յետին կարելցական պահեցը կը նկարագրուին մանրամատն. յետոյ կը յիշատակուին Արքահամագութառոսի Հոսպմայ վերջին օրերու շրջանէն բանի մը զժուարին պարագաւներ, որոնց կաթողիկոսին կենացրական պատմութեան հետ ուղղակի աղերս ունին:

Գերյարգելի և գերապատուելի տեսանդ իմոյ յոյժ սիրով և խսնարձութեամբ  
ողջոյն մատուցանեմ

... Ի կողմանէ գերապայծառ Պատրիարքին մերոյ յայտ լիցի հրամանուց սր երբ սա Հրօս եկաւ, մատոնիք, եւս առաւել մօնիքնոր ասիմանն մծաւ սիրով պատվեին զնա. նաև որպէս այլ անզամ ծանուցի ֆափին և ոմանք կարտինալք յոյժ սէր ցուցին նմա. բայց զնալու ժամանակն այլ կերպ փոխվեցաւ բանն, ոչ ֆափին կողմանէ, այլ կարտինալք Փէթրան և ասիմանն հանգերձ այլ մատոնիք երես դարձուցին ի նմանէ. այս երկու պատճառաւ, մին Սուրբիաս վարդապետն կողմանէ կարտինալք Փէթրան հրաման առաւ իրեան առ ի վերստին ձեռնադրել քահանայ և եպիսկոպոս կը ուղարկեալ աէր սուրբիան. և սա զէմ եկաց հրամանին նորին, զնաց և ծանուց ֆափին զանազան արքելմունս Սուրբիաս վարդապետին կողմանէ, և հրաման էառ ոչ օծել զնա հափսկոպոս. և կարտինալք Փէթրան այս բանի վերայ բարկացաւ, բայց դալիսանի փուլիթիքապով առանց արտաքապէս ցոյց տալով. այն օրերն Սուրբիաս Վ. փոքր ինչ տկարութիւն ունէր. լսկով այս խապարն, սաստկացաւ տկարութիւնն նորին, մանաւանդ ջրվաթի կողմանէ անկալ ի հոգեւարութիւն. զնացի տեսանել զնա. մատոնիք շրջապատեալ էին զնա. ի Հայոց ոչ ոք կայր անդ. Պատրիարքին եւս հանգերձ քահանայութ զնաց հայցէ զնա առաջ քան մնանակին կոտակ առաւ փոփականտառ վասին (?) և անդ թապիլ և կարտինալք Փէթրան վերիլ. պատրիարքն զնաց ի թալումն նորին հանգերձ եպիսկոպոսօք և քահանայիւթ. Թէպէտ քահանայի կարիք մնաւա, բայց թառով իրը եպիսկոպոս արքարին զթաղութ նորին. ես իրոյ մահկան մոմաւիք ասին և խոսեցան թէ նախատինն և տրամութիւնն ըշտապեցոյ նմա զմանն իր. բացամբ կարծէին թէ շատ փող ունիցեր, բայց լնդ ամէնն հազիւ հազար ուսկութ հասանի. և մեր եկեղեցնայ ոչ ինչ թողաւ ւեւ երկրորդ պատճառն ասիմանին հակառակութեան այս է. Զ ամիս առաջ խապար եկալ թէ մատոնոց պատրիարքն վաղճանել է և եպիսկոպոս երկու ֆուխա եղեալ թ պատրիարք արարեալ են. և երկու զանազան էլլի լուսալ են ֆափին խնդրելով զհաստառութիւն. և ֆափին ետ քննելոյ զբանն ոչընչացոյց գերկուսին զընտրողաւթիւնն և երրորդ ոմն ասկա կան ասիմանին անուանեաց Պատրիարք. ետ անուանելոյն հարցոյց մեր Պատրիարքին զորպիսութիւնն այս երրորդ անձին, և պատրիարքն մոածելով թէ հարկաւոր է ամենայն ոք մնաւորաց մանաւանդ ֆափին զճմարիան ասել, ծանուցեր է թէ ընտրեալ եպիսկոպոսն բարդ և խոհեմ մարդ է, բայց թուլ[ր]քծած եղբայր մի ունի յոյժ չար և բազում վլասս հասուցեալ է ազգին և աթոռոյն. և այս թուրքն առաւել մնրածակայ ազգական է ասիմանին, . . . . .

Ամի տեառն 1743, Օգոստոսի 3  
[ի Հոռով]  
(Շարունակելի)

Խոնարհագոյն որդի և ծառայ  
[պատկերացն] Յոհաննէս

Հ. Ղերանդ Տաօսեաւ